

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
(ԱՆԳԼԵՐԵՆ)

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԻՋԵՎԱՆ – 2013

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆԳԼԵՐԵՆ)
Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

1. Ծրագրի անվանումը և - մասնագիտության թվանիշը	Օտար լեզու և գրականություն (անգլերեն) 031300
2. Բուհը	Երևանի պետական համալսարան Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Բակալավրի աստիճան
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2012-2013
6. Ուսումնառության լեզուն	Անգլերեն, հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- միջնակարգ և մասնագիտական կրթություն,
- ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով անգլերեն /գրավոր և բանավոր/ և հայոց լեզու /գրավոր/ առարկաներից քննությունների արդյունքների հիման վրա:

9. Ծրագրի նպատակները

- Ծրագրի նպատակն է պատրաստել անգլերեն լեզվի և գրականության բնագավառում միջառարկայական գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ, որոնք ունակ կլինեն.
- դասավանդել անգլերեն միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում,
- ներդնել անգլերեն (ինչպես նաև գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն կամ իտալերեն) բանավոր և գրավոր խոսքի գիտելիքներն ու հմտությունները հաղորդակցման տարբեր ոլորտներում,
- կատարել գրավոր և բանավոր թարգմանություններ,
- կատարել գիտական հետազոտություններ անգլերենի և անգլիական գրականության տեսական և գործնական խնդիրների վերաբերյալ:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը.

- Ա1.** ծանոթ կլինի ժամանակակից բանասիրության տեսական հիմնադրություններին և մեթոդաբանությանը,
- Ա2.** ծանոթ կլինի բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև միջգիտակարգային կապերին ու հարաբերություններին.
- Ա3.** կիմանա անգլերենի հնչունաբանության, բառագիտության, քերականության հիմնադրությունները և թարգմանաբանության հայեցակարգերը.
- Ա4.** կտիրապետի անգլերենի ուձագիտության հիմունքներին և ծանոթ կլինի տարբեր տիպի տեքստերի լեզվաուձական, բանասիրական վերլուծության մեթոդաբանությանը.
- Ա5.** ծանոթ կլինի անգլերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոններին, կունենա երկրագիտական տեղեկություններ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի մասին.

Դասավանդման/ուսումնասրության մեթոդները

Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա7 կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.

Ա1, Ա2, Ա3.

- դասախոսություններ,
- սեմինար պարապմունքներ,
- գործնական պարապմունքներ.
- ռեֆերատներ.

Ա4, Ա5, Ա6, Ա7.

- դասախոսություններ.
- սեմինար պարապմունքներ,
- խմբային քննարկումներ,
- բանավոր և գրավոր հարցումներ.

Գնահատման մեթոդները

Ուսանողների Ա1- Ա7 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով.

Ա1- Ա7.

- գրավոր և բանավոր առաջադրանքների ստուգում,
- ստուգարքներ,
- միջանկյալ քննություններ,
- գրավոր ու բանավոր քննություններ
- եզրափակիչ բանավոր քննություններ,
- կուրսային աշխատանքների պաշտպանություն,
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

<p>Ա6. ծանոթ կլինի արդի գրականագիտության հիմնական հասկացություններին և գրական երկի կառուցվածքին, համաշխարհային և անգլո-ամերիկյան գրականության պատմությանը, գրական կարևոր դարաշրջաններին և ուղղություններին.</p> <p>Ա7. ծանոթ կլինի մանկավարժության ժամանակակից տեսություններին և հիմնական հասկացություններին, անգլերենի ուսուցման ժամանակակից մեթոդներին:</p>	
<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. վերլուծելու և մեկնաբանել անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները.</p> <p>Բ2. գործադրելու ձեռք բերած լեզվական գիտելիքները և անգլերեն բանավոր և գրավոր խոսքի հմտությունները հաղորդակցման տարբեր ոլորտներում.</p> <p>Բ3. կիրառելու ոչ մասնագիտական օտար լեզվով գրավոր և բանավոր խոսքի հմտությունները, երկրագիտական</p>	<p>Ղասալանդման/ուսումնասության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ7 կարողությունները հետևյալ մեթոդներով.</p> <p>Բ1.</p> <ul style="list-style-type: none"> ▪ գործնական պարապմունքներ, ▪ գրավոր և բանավոր առաջադրանքներ, ▪ դասախոսություններ, <p>Բ2- Բ5.</p> <ul style="list-style-type: none"> ▪ գրավոր և բանավոր առաջադրանքներ, ▪ գիտական սեմինարներ, ▪ գործնական պարապմունքներ, <p>Բ6- Բ7</p> <ul style="list-style-type: none"> ▪ գրավոր և բանավոր առաջադրանքներ, ▪ սեմինար պարապմունքներ, ▪ մանկավարժական պրակտիկա,

<p>բնույթի գիտելիքները հաղորդակցման տարբեր ուղորտներում.</p> <p>Բ4. ընկալելու և վերլուծելու դասական լեզուներով (լատիներեն, գրաբար, հին և միջին անգլերեն) տեքստեր՝ կիրառելով տվյալ լեզվի քերականության բառապաշարի, ինչպես նաև լեզվի, գրականության և մշակույթի իմացությունը.</p> <p>Բ5. կատարելու տարբեր բնույթի տեքստերի թարգմանություններ.</p> <p>Բ6. դասավանդելու անգլերեն՝ կիրառելով ուսուցման ժամանակակից մեթոդներ և տեխնիկական միջոցներ.</p> <p>Բ7. վերլուծելու և մեկնաբանելու լեզվական և գրականագիտական խնդիրներ, կատարելու գիտական ուսումնասիրություններ անգլիագիտության և արտասահմանյան գրականության տարբեր ոլորտներում:</p>	<p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողների Բ1-Բ7 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.</p> <p>Բ1 - Բ5.</p> <ul style="list-style-type: none"> ▪ գրավոր և բանավոր առաջադրանքների կատարման ստուգում, ▪ ստուգարքներ, ▪ միջանկյալ գրավոր ու բանավոր քննություններ, ▪ եզրափակիչ բանավոր քննություններ. <p>Բ6- Բ7</p> <ul style="list-style-type: none"> ▪ գրավոր և բանավոր առաջադրանքների կատարման ստուգում, ▪ ստուգարքներ, ▪ միջանկյալ գրավոր ու բանավոր քննություններ, ▪ եզրափակիչ բանավոր քննություններ, ▪ բակալավրական ավարտական աշխատանքի պաշտպանություն, ▪ կուրսային աշխատանքների պաշտպանություն.
<p>Գ. Ընդհանրական (վոխանցելի) կարողություններ</p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p>Գ1. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակել և ներկայացնել տեղեկատվությունը.</p> <p>Գ2. գիտելիքները կիրառելու պրակտիկ գործունեության</p>	<p>Դասավանդման/ուսումնասիրության մեթոդները</p> <p>Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով.</p> <p>Գ1 –Գ3.</p> <ul style="list-style-type: none"> ▪ առաջադրանքներ և խմբային քննարկումներ, ▪ սեմինար պարապմունքներ, ▪ գործնական պարապմունքներ,

<p>մեջ.</p> <p>Գ3. պատրաստելու զեկուցումներ, կատարելու լեզվական նյութի բանասիրական վերլուծություն, գրել գրախոսություններ.</p> <p>Գ4. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում.</p> <p>Գ5. համադրելու լեզվի և գրականության մասին տեսական և գործնական գիտելիքները (համապատասխան բնույթի աշխատանք կատարելիս):</p>	<ul style="list-style-type: none"> ▪ մանկավարժական պրակտիկա, ▪ համացանցից օգտվելով՝ անհատական հանձնարարությունների կատարում. ▪ ավարտական աշխատանքի պատրաստում. <p>Գ4-Գ5.</p> <ul style="list-style-type: none"> ▪ օտարալեզու մասնագիտական գրականության ընթերցում ▪ համացանցից օգտվելով՝ կատարել հանձնարարություններ. ▪ բանավոր ներկայացումներ, ▪ գիտական սեմինար, ▪ դասախոսություններ, ▪ սեմինար պարապմունքներ: <p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողների Գ1-Գ6 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.</p> <p>Գ1-Գ5.</p> <ul style="list-style-type: none"> ▪ առաջադրանքների կատարման ստուգում, ▪ կուրսային աշխատանքների պաշտպանություն ▪ ռեֆերատների քննարկում, ▪ անհատական առաջադրանքների կատարման ստուգում, ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն:
--	---

<p>11. Ծրագրի կառուցվածքը</p>
<p>11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը</p>
<p>Բակալավրի ծրագիրը բաղկացած է 4 հիմնական կրթամասերից՝</p>

ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (28 կրեդիտ աշխատաձավալով), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, (10 կրեդիտ աշխատաձավալով) ընդհանուր մասնագիտական (178 կրեդիտ աշխատաձավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (24 կրեդիտ աշխատաձավալով):

1. Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Պարտադիր դասընթացներ (28 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

Գամրնտրական դասընթացներ (4 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:

2. Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Պարտադիր դասընթացներ (8 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

Գամրնտրական դասընթացներ (2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը:

3. Մասնագիտական կրթամաս (178 կրեդիտ)

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների լիարժեք ընկալումը *(178 կրեդիտ)*:

4. Կրթական այլ մոդուլներ

Արտադրական պրակտիկա *(2 կրեդիտ)*

Արտադրական/ մանկավարժական պրակտիկա *(4 կրեդիտ)*

Ապահովում է մասնագիտական ոլորտի կիրառական հիմնախնդիրների ընկալումը.

Կուրսային աշխատանքներ *(4 կրեդիտ)*

Անփոփիչ ատեստավորում *(4 կրեդիտ)*

Ավարտական աշխատանքի պաշտպանություն *(12 կրեդիտ)*

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփ հետազոտություն ներկայացնել բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում:

11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ

1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/

ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
<p><i>Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ 0302/ B01. Հայոց լեզու և գրականություն -1 (2 կրեդիտ) ▪ 0302/ B02. Հայոց լեզու և գրականություն -2 (2 կրեդիտ) ▪ 0305/ B07. Ռուսաց լեզու -1 (4 կրեդիտ) ▪ 0305/ B08. Ռուսաց լեզու -2 (4 կրեդիտ) ▪ 0301/ B01. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ) ▪ 0301/ B02. Հայոց պատմության հիմնահարցեր-2 (2 կրեդիտ) ▪ 0001/ B01. Ֆիզդաստիարակություն(0 կրեդիտ) <p><i>Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ 0101/ B02. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ) ▪ 0103/ B01. Էկոլոգիայի և բնապահպանության հի- 	<ul style="list-style-type: none"> ▪ 0101/B01. Մաթեմատիկական հիմունքներ (2 կրեդիտ) ▪ 0102/B01. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ (2 կրեդիտ) 	<p>Առնվազն 60 կրեդիտի կուտակում:</p>

<p>մունքներ (2 կրեդիտ)</p> <p>Հնդհանուր մասնագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> ▪ 0305/ B10. Լատիներեն (2 կրեդիտ) ▪ 0305/ B43. Անգլերեն լեզու -1 (12 կրեդիտ) ▪ 0305/ B44. Անգլերեն լեզու -2 (14 կրեդիտ) ▪ 0302/ B61. Հայ հին ու նոր գրականություն -1 (2 կրեդիտ) ▪ 0302/ B40. Գրականագիտության հիմունքներ -1 (2 կրեդիտ) ▪ 0304/ B93. Արտասահմանյան գրականություն - 1 (2 կրեդիտ) ▪ 0302/ B55. Գրաբար -2 (2 կրեդիտ) ▪ 0302/ B62. Հայ նորագույն գրականություն (2 կրեդիտ) 		
---	--	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
<p>Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> ▪ 0305/ B09. Ռուսաց լեզու-3 (4 կրեդիտ) ▪ 0301/ B05. Փիլիսոփայության հիմունքներ (4 կրեդիտ) 	<p>Հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> ▪ 0201/ B01. Տնտեսագիտություն (2 կրեդիտ) <p>կամ</p>	<p>Առնվազն 60 կրեդիտի կուտակում:</p>

<ul style="list-style-type: none"> ▪ 0001 /B01. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական կրթամաս ▪ 0305/ B45. Անգլերեն լեզու - 3 (9 կրեդիտ) ▪ 0305/ B46. Անգլերեն լեզու - 4 (8 կրեդիտ) ▪ 0305/ B51. 2-րդ մասնագիտական օտար լեզու – 1 /ֆրանսերեն/ 8 կրեդիտ) ▪ 0305/B52. 2-րդ մասնագիտական օտար լեզու– 2/ֆրանսերեն/ (10 կրեդիտ) ▪ 0305/B94. Արտասահմանյան գրականություն -2 (3 կրեդիտ) ▪ 0304/B95. Արտասահմանյան գրականություն -3 (3 կրեդիտ) ▪ 0305/B 38. Երկրագիտություն /հիմն.օտ.լ անգլերեն/ (3 կրեդիտ) ▪ 0303/ B03. Հոգեբանություն (2 կրեդիտ) ▪ 0302/ B13. Լեզվաբանություն հիմունքներ (2 կրեդիտ) 	<ul style="list-style-type: none"> ▪ 0301/ B03. Քաղաքագիտություն (2 կրեդիտ) կամ ▪ 0301/ B04. Իրավագիտություն (2 կրեդիտ) ▪ 0202/ B01.Մշակութաբանություն (2 կրեդիտ) կամ ▪ 0301/ B06. Կրոնների պատմություն (2 կրեդիտ) 	
--	--	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>3-րդ ուստարի /5-6 կիսամյակներ/</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

<p><i>Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ 0001/ B05. Քաղաքացիական պաշտպանություն (2 կրեդիտ) ▪ 0001/ B06. Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (2 կրեդիտ) ▪ 0001/ B01. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) <p><i>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ 0305/ B47. Անգլերեն լեզու - 5 (10 կրեդիտ) ▪ 0305/ B48. Անգլերեն լեզու - 6 (9 կրեդիտ) ▪ 0305/ B53. 2-րդ մասնագիտական օտար լեզու - 3 /ֆրանսերեն/ (8 կրեդիտ) ▪ 0305/ B54. 2-րդ մասնագիտական օտար լեզու - 4 /ֆրանսերեն/ (8 կրեդիտ) ▪ 0305/B96. Արտասահմանյան գրականություն -4 (3 կրեդիտ) ▪ 0305/B98. Արտասահմանյան գրականություն -5 (3 կրեդիտ) ▪ 0305/B35. Բառագիտություն (2 կրեդիտ) ▪ 0305 B62. Օտար լեզվի պատմություն (3 կրեդիտ) ▪ 0305/ B01. Ռուս գրականության պատմություն (2 կրեդիտ) 		<p>Առնվազն 60 կրեդիտի կուտակում:</p>
--	--	--------------------------------------

<ul style="list-style-type: none"> ▪ 0305/ B61. Տեսական հնչյունաբանություն (3 կրեդիտ) ▪ 0303/ B03. Ընդհանուր մանկավարժություն (3 կրեդիտ) ▪ 0305/ B82. Ռուս գրականության պատմություն -1 (2 կրեդիտ) <p>Կրթական այլ մոդուլներ</p> <ul style="list-style-type: none"> ▪ Կուրսային աշխատանք (2 կրեդիտ) 		
--	--	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>4-րդ ուստարի /7-8 կիսամյակներ/</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄՇՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
<p>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> ▪ 0305/ B49. Անգլերեն լեզու - 7 (6 կրեդիտ) ▪ 0305/ B50. Անգլերեն լեզու – 8 (2 կրեդիտ) ▪ 0305/ B55. 2-րդ մասնագիտական օտար լեզու – 5 /ֆրանսերեն/ (9 կրեդիտ) ▪ 0305/ B56. 2-րդ մասնագիտական օտար լեզու – 6 /ֆրանսերեն/ (2 կրեդիտ) ▪ 0305/B100. Արտասահմանյան գրականություն – 6 (3 կրեդիտ) ▪ 0305/B102. Արտասահմանյան գրականություն – 7 (2 կրեդիտ) ▪ 0305/ B64. Տեսական քերականություն (3 կրեդիտ) 		<p>Առնվազն 240 կրեդիտի կուտակում</p> <p>Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00</p>

<ul style="list-style-type: none"> ▪ 0305/ B67. Երկրագիտություն /2-րդ մասնագիտական օտար լեզու -ֆրանսերեն/ (3 կրեդիտ) ▪ 0305/ B59. Օտար լեզվի դասավանդման տեսություն և մեթոդներ (3 կրեդիտ) ▪ 0305/ B65. Ոճագիտություն (3 կրեդիտ) ▪ 0305/ B32. Թարգմանության տեսություն և պրակտիկա (2 կրեդիտ) <p>Կրթական այլ մոդուլներ</p> <ul style="list-style-type: none"> ▪ Կուրսային աշխատանք (2 կրեդիտ) ▪ Մանկավարժական պրակտիկա (4 կրեդիտ) ▪ Ամփոփիչ մասնագիտական քննություն (4 կրեդիտ) ▪ Ավարտական աշխատանք (12 կրեդիտ) 		
--	--	--

11. 2. Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները

Պրակտիկան կազմակերպվում է գիտական դեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Մանկավարժական պրակտիկան իրականացվում է ՀՀ ավագ, հիմնական և միջնակարգ դպրոցներում:

11.3. Ավարտական ատեստավորումներ	
Ուստարի	Անվանումը
4-րդ ուստարի	Ամփոփիչ ատեստավորում Բակալավրի ավարտական աշխատանքի պաշտպանություն

12. Ուսումնական պլանի քարտեզը
Կցված է

13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ

Տե՛ս «ԵՊՀ ԻՄ կրեդիտային համակարգով ուսումնառության ուղե-
ցույց և դասընթացների տեղեկագիրք», Իջևան, 2012 թ., էջ 11-19:

14. Ապագա կարիերայի հնարավորությունները

«Օտար լեզու և գրականություն /անգլերեն/» ծրագրի շրջանա-
վարտները կարող են աշխատանքի անցնել բարձրագույն կրթության
և տնտեսության այն բոլոր ոլորտներում, որտեղ պահանջվում է անգ-
լերեն լեզվի իմացություն, և զբաղեցնել հետևյալ պաշտոնները.

- ուսուցիչ,
- թարգմանիչ,
- մենեջեր,
- էքսկուրսավար,
- կրտսեր գիտաշխատող,
- մամլո քարտուղար,
- խմբագիր:

Հնարավոր աշխատավայրերն են.

- Ավագ, հիմնական և միջնակարգ դպրոցներ,
- միջազգային կազմակերպություններ,
- կրթական և հետազոտական պետական ու մասնավոր հիմնարկ-
ներ,
- բանկեր,
- տուրիստական գործակալություններ,
- թանգարաններ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը
մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (Եթե կան)

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օ-
ժանդակ ռեսուրսները.

- Ա. մասնագիտական գրականությամբ հազեցած գրադարան,
- Բ. էլեկտրոնային ռեսուրսներ:

16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմ- նորոշիչ(ներ)ը

- Պետական կրթական չափորոշիչ
<<Օտար լեզու և գրականություն
(անգլերեն)>> մասնագիտությամբ
- ՀՀ կրթական որակավորումների
ազգային շրջանակ

17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ

18. Լրացուցիչ տեղեկատվություն

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ դասընթացների տեղեկագրքում:

Օրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ	
Ա1.	Ժամանակակից բանասիրության տեսական հիմնադրույթների և մեթոդաբանության իմացություն	Գ1	տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու, տեղեկատվությունը մշակելու և ներկայացնելու կարողություններ
Ա2.	բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև միջգիտակարգային կապերի ու հարաբերությունների մասին գիտելիքներ	Գ2	պրակտիկ գործունեության մեջ գիտելիքները կիրառելու կարողություն
Ա3.	անգլերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության հիմնադրույթների և թարգմանաբանության հայեցակարգերի իմացություն	Գ3	գեկուցումներ պատրաստելու, լեզվական նյութի բանասիրական վերլուծություն կատարելու, գրախոսություններ գրելու կարողություն
Ա4.	անգլերենի ոճագիտության հիմունքների և տարբեր տիպի տեքստերի լեզվաոճական, բանասիրական վերլուծության մեթոդաբանության իմացություն	Գ4	միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում կիրառելու կարողություն
Ա5.	անգլերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնների իմացություն, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի մասին երկրագիտական գիտելիքներ	Գ5	համապատասխան բնույթի աշխատանք կատարելիս լեզվի և գրականության մասին տեսական և գործնական գիտելիքները համադրելու կարողություն

Ա6.	արդի գրականագիտության հիմնական հասկացությունների և գրական երկի կառուցվածքի, համաշխարհային և անգլո-ամերիկյան գրականության պատմության, գրական կարևոր դարաշրջանների և ուղղությունների մասին գիտելիք	Գ6	մասնագիտական էթիկայի նորմերը պահպանելու կարողություններ:
Ա7.	մանկավարժության ժամանակակից տեսությունների և հիմնական հասկացությունների, անգլերենի ուսուցման ժամանակակից մեթոդների իմացություն		
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ			
Բ1.	անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական երևույթների և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները վերլուծելու և մեկնաբանմանելու կարողություն	Բ5.	տարբեր բնույթի տեքստերի թարգմանություններ կատարելու կարողություններ
Բ2.	ձեռք բերած լեզվական գիտելիքները և անգլերեն բանավոր և գրավոր խոսքի հմտությունները հաղորդակցման տարբեր ոլորտներում կիրառելու ունակություն	Բ6.	ժամանակակից մեթոդներով և տեխնիկական միջոցներով անգլերենի դասավանդման կարողություն
Բ3.	ոչ մասնագիտական օտար լեզվով գրավոր և բանավոր խոսքի հմտությունները, երկրագիտական բնույթի գիտելիքները հաղորդակցման տարբեր ոլորտներում կիրառելու կարողություն	Բ7.	լեզվական և գրականագիտական խնդիրներ վերլուծելու և մեկնաբանելու, անգլիագիտության և արտասահմանյան գրականության տարբեր ոլորտներում կիրառելու կարողություններ

Բ4.	դասական լեզուներով (լատիներեն, գրաբար, հին և միջին անգլերեն) տեքստեր վերլուծելու կարողություն	րտներում գիտական ուսումնասիրություններ կատարելու կարողություն
-----	---	---

Ծրագրի կրթական վերջնարդյունքները														
Ա1	Ա2 Ա3	Ա4	Ա5	Ա6 Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5 Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5
Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից:														
3	4 4	4	4	4 4	4	4	4	2	4	4	4	4	4	4

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդ. Կրեդ	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																		
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5
Լատիներեն	2											+				+	+	+	+	+
Գրաբար	2											+				+	+	+	+	+
Անգլերեն լեզու-1	12			+	+	+			+	+			+		+	+	+	+	+	+
Անգլերեն լեզու-2	14			+	+	+			+	+			+		+	+	+	+	+	+
Անգլերեն լեզու-3	9			+	+	+			+	+			+		+	+	+	+	+	+
Անգլերեն լեզու-4	8			+	+	+			+	+			+		+	+	+	+	+	+
Անգլերեն լեզու-5	10			+	+	+			+	+			+		+	+	+	+	+	+
Անգլերեն լեզու-6	9			+	+	+			+	+			+		+	+	+	+	+	+

Արտասահմանյան գրականություն -2	3							+										+	+	+	+	+	+	
Արտասահմանյան գրականություն -3	2							+											+	+	+	+	+	+
Արտասահմանյան գրականություն -4	3							+											+	+	+	+	+	+
Արտասահմանյան գրականություն -5	3							+											+	+	+	+	+	+
Արտասահմանյան գրականություն -6	3							+											+	+	+	+	+	+
Արտասահմանյան գրականություն -7	2							+											+	+	+	+	+	+
Բառագիտություն	2			+																+	+	+	+	+
Տեսական քերականություն	3			+																+	+	+	+	+
Օտար լեզվի դասավանդման տեսություն և մեթոդներ	3																			+		+	+	+
Երկրագիտություն /հիմնական օտար լեզու- անգլերեն/	3																				+	+	+	+
Երկրագիտություն /2րդ հիմնական օտար լեզու-ֆրանսերեն/	3																				+		+	+

Ոճագիտություն	3				+												+	+	+	+	+	
Օտար լեզվի պատմություն	3					+												+	+	+	+	+
Տեսական հնչյունաբանություն	3				+					+								+	+	+	+	+
Թարգմանության տեսություն և պրակտիկա	2				+					+	+							+	+	+	+	+
Ընդհանուր մանկավարժություն	3									+								+	+	+	+	+
Հոգեբանություն	2									+								+	+	+	+	+
Լեզվաբանության հիմունքներ	2																	+	+	+	+	+
Հայ հին ու նոր գրականություն	2									+							+	+	+	+	+	+
Ռուս գրականության պատմություն	2									+								+	+	+	+	+
Հայ նորագույն գրականություն	2									+							+	+	+	+	+	+
Գրականագիտության հիմունքներ	2									+							+	+	+	+	+	+
Հայոց լեզու և գրականություն-1	2																+	+	+	+	+	+

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՈՂՈՒԼՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**

0302/B01	Հայոց լեզու և գրականություն - 1	2 կրեդիտ
2 ժամ	8/0/24	
I կիսամյակ	Մտուգարք	
<p>Դասընթացի նպատակն է ժամանակակից հայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության համակարգերի ուսուցումը նպատակաուղղել խոսքի մշակույթի զարգացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների ամրակայմանը:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կիմանա ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • տիրապետել իր մասնագիտական բառապաշարին և տերմինաբանությանը: ✓ (ընդհանրական կարողություններ) • գրական հայերենով շարադրել մտքերը, գործնականում կիրառել լեզվաոճական հնարները: 		
<p>Համառոտ բովանդակությունը. Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: Հայ հին գրականություն: Հնչյունաբանություն: <i>Հայերենի</i> հնչյունական համակարգը: Ուղղագրություն և ուղղախոսություն: Բառագիտություն: Մտուգաբանություն, իմաստաբանություն, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն: Ոճերի դասակարգումը: Հայ միջնադարյան գրականություն:</p>		
<p>Մտուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները. Մտուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թելադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:</p>		

Հիմնական գրականության ցանկը

1. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009:
2. Մուքիաթյան Ա. Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն-
ին, բառագիտություն/, Երևան, 1982:

0302/B02	Հայոց լեզու և գրականություն- 2	2 կրեդիտ
2 ժամ	8/0/24	
II կիսամյակ	Հանրագումարային	
<p>Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները..</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none">• կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none">✓ (բուն մասնագիտական կարողություններ)• ճիշտ գործածել քերականական ձևերը:✓ (ընդհանրական կարողություններ)• գործնականում կիրառելու ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարները,• վարելու երկխոսություն և բանավեճ:		
<p>Համառոտ բովանդակությունը.</p> <p>Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Հայ նոր գրականություն: Շարահյուսություն. Պարզ նախադասություն: Հայ նորագույն գրականություն: Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: Ուղղակի և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը:</p>		
<p>Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.</p> <p>Քննությունն անցկացվում է բանավոր՝ նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր: Առաջին եր-</p>		

կու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք:

Հիմնական գրականության ցանկը

1. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009:
2. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու /ձևաբանություն/, Երևան, 2004:

0305/B07	Ռուսաց լեզու - 1	4 կրեդիտ
4 ժամ	0/0/64	
I կիսամյակ	Ստուգաքո	
<p>Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, ապահովել բանավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակությունները՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կիմանա ծրագրով նախատեսված քերականական նյութը, • կունենա ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար, • կիմանա ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: <p><i>Ունակ կլինի</i></p> <p>✓ (բուն մասնագիտական կարողություններ)</p> <ul style="list-style-type: none"> • կառուցելու բանավոր և գրավոր խոսք, • վարելու երկխոսություն, • ընկալելու և վերարտադրելու կարդացած և ունկնդրած նյութի - բովանդակությունը, • թարգմանելու հայերենից ռուսերեն միջին բարդության տեքստեր: <p>✓ (ընդհանրական կարողություններ)</p> <ul style="list-style-type: none"> • ընթերցել ռուս դասականների ստեղծագործությունները բնագրով, • պատկերացում կազմել ռուսերենի և հայերենի ընդհանրությունների ու տարբերությունների մասին: 		
Համառոտ բովանդակությունը.		

Լեզվի դերը հասարակության կյանքում: Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Բառագիտություն. պատկերացում բառիմաստի մասին. միիմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը, հոմանիշներ և հականիշներ, համանուններ և հարանուններ: Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակրցման ուղղվածության:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. Русский язык. Под общ. ред. Л.М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004

0305/B08	Ռուսաց լեզու - 2	4 կրեդիտ
4 ժամ	0/0/64	
II կիսամյակ	Ստուգարք	
<p>Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:</p>		
<p><i>Կրթական վերջնաարդյունքները</i></p> <ul style="list-style-type: none"> • Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կիմանա ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները, • կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) 		

<ul style="list-style-type: none"> • վերարտադրելու կարողացած տեքստի բովանդակությունը, • վերլուծելու և մեկնաբանելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր, • ինքնուրույն կազմելու կապակցված տեքստ ծրագրով նախատեսված թեմատիկայով: <p>✓ (ընդհանրական կարողություններ)</p> <ul style="list-style-type: none"> • ինքնուրույն կատարել ռուսերենի և ուսումնասիրված այլ լեզուների համակարգերի գույգադրական վերլուծություն:
<p>Համառոտ բովանդակությունը.</p> <p>Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:</p>
<p>Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.</p> <p>Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:</p>
<p>Հիմնական գրականության ցանկը</p> <p>1. Русский язык. Под общ. ред. Л.М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004</p>

0305/B09	Ռուսաց լեզու - 3	4 կրեդիտ
4 ժամ	0/0/64	
III կիսամյակ	Հանրագումարային	
Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվային հմտությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և ազատ օգտվելը մասնագիտական գրականությունից:		
Կրթական վերջնաարդյունքները		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա		
Գիտելիք և իմացություն		
<ul style="list-style-type: none"> • կտիրապետի լեզվի գիտական ոճի ձևաբանական և շարահյու- 		

սական միջոցներին, տվյալ մասնագիտության տերմինաբանությանը,

- կծանոթանա թարգմանության տեսության հիմնական խնդիրներին, ուղղագրության և կետադրության կանոններին:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ներկայացնելու մասնագիտական տեքստի բովանդակությունը,
- կազմելու մասնագիտական տեքստի սլան, անոտացիա,
- թարգմանելու մասնագիտական տեքստեր հայերենից ռուսերեն,
- ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմատիկայով:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- հաղորդակցվելու ռուսական մշակույթի ստեղծագործություններին,
- ինքնուրույն կատարելու ռուսերենի և այլ ուսումնասիրված լեզուների համակարգերի գուգադրական վերլուծություն,
- մասնակցելու լեզվական նյութին առնչվող քննարկումներին:

Համատոտ բովանդակությունը.

Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրներ. Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքներ:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:

Հիմնական գրականության ցանկը

1. Русский язык. Под общ. ред. Л.М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004

0301/В01

Հայոց պատմության հիմնահարցեր - 1

2 կրեդիտ

2 ժամ	24/8/0
I կիսամյակ	Ստուգարք
<p>Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնել մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ըստ ամենայնի լուսաբանման :</p>	
<p>Կրթական վերջնաարդյունքները</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կունենա ընդհանուր պատկերացում հայոց պատմության առանցքային հիմնախնդիրների, հայոց պետականության ժամանակափուլերի առանձնահատկությունների, ազատագրական պայքարի հերոսական էջերի մասին: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) <ul style="list-style-type: none"> • գնահատել այոց պատմության դերը համաշխարհային պատմության հուլովյթում, • ինքնուրույն մտածելու և անհրաժեշտ դատողություններ անելու հայոց պատմության տարբեր հարցերի վերաբերյալ, • անաչառ գնահատական տալ Հայոց պատմության տարբեր հիմնահարցերին և ազգային-պետական գործիչների գործունեությանը: ✓ (ընդհանրական կարողություններ) <ul style="list-style-type: none"> • ստեղծագործաբար կիրառելու ու զարգացնել ունեցած գիտելիքները, • վերլուծելու փաստերը և հետևություններ անելու, • գեկուցումներ պատրաստելու և գիտական բանավեճեր վարել: 	
<p>Համառոտ բովանդակությունը.</p> <p><i>Ներածություն.</i> Հայկական բնաշխարհը: Վարչական բաժանումները: <i>Թեևա 1՝</i> Հայաստանը հնագույն շրջանում: <i>Թեևա 2՝</i> Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը (Ք.ա. IX-VIդդ.): Համահայկական պետության ստեղծումը (Երվանդունիների թագավորությունը): Մեծ Հայքի պետության վերելքը (Արտաշեսյանների թագավորությունը): Արշակունիների թագավորությունը (I-V</p>	

դդ.): *Թեմա 3*՝ Հայաստանը վաղ միջնադարում: *Թեմա 4*՝ Հայաստանը զարգացած միջնադարում: *Թեմա 5*՝ Հայաստանը ուշ միջնադարում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.
 Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն /հնագույն ժամանակներից մինչև 18 – րդ դարի վերջ/, Եր., 1975:
2. Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն /հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը/, Եր., 2008:
3. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1984:
4. Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ս., Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն/սկզբից մինչև 18-րդ դարի վերջ/, Եր., 1975:
5. Պողոսյան Ս., Ասրյան Ա., Ստեփանյան Խ., Հովհաննիսյան Է., Հայոց պատմություն, Եր., 2009:
6. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան 1981:
7. Հայ ժողովրդի պատմություն , ԳԱհրատ., Երևան 1971:

0301/Յ02	Հայոց պատմության հիմնահարցեր - 2	2 կրեդիտ
2 ժամ	(24/8/0)	
II կիսամյակ	Հանրագումարային	
<p>Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին մատուցել հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ընթացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ Հանրապետությունների պատմության վերլուծության վրա:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի ավարտին ուսանողը կունենա <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կձանթանա Հայոց նոր և նորագույն շրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագները, Հայկական հարցի, հայոց – ցեղասպանության և Սփյուռքի առանցքային հիմնախնդիրներին, 		

20-րդ դարում Հայոց նորագույն պետականության ձևավորման գործընթացները, նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ավելի իրատեսորեն գնահատելու նոր և նորագույն շրջանի պատմության առանցքային իրադարձությունները,
- ճիշտ գնահատելու տարբեր ազգային-քաղաքական, հասարակական ուժերի և պատմական նշանավոր գործիչների իրական – դերակատարությունը Հայոց նոր և նորագույն շրջանի պատմության մեջ,
- ընկալելու նոր և նորագույն շրջանի մշակույթի անխզելի կապը հայոց պատմության նույն շրջանի առանցքային իրադարձությունների հետ:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ստեղծագործաբար կիրառելու ու զարգացնելու ունեցած գիտելիքները,
- վերլուծելու փաստերը և հետևություններ անել,
- զեկուցումներ պատրաստելու ու գիտական բանավեճեր վարելու:

Համառոտ բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ ազատագրական շարժումները 17-18-րդ դդ.: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: *Թեմա 2՝* Հայկական հարցի ծագումը և բովանդակությունը: Հայ ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը (1870-ա-կան թթ. - 20-րդ դ. սկիզբ): *Թեմա 3՝* Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: *Թեմա 4՝* Արևմտահայության Մեծ եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: *Թեմա 5՝* 1917թ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը: 1917թ Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: *Թեմա 6՝* Հայաստանի առաջին հանրապետությունը (1918 -1920 թթ.): *Թեմա 7՝* Խորհրդային Հայաստանը (1920-1991 թթ.): *Թեմա 8՝* Հայաստանի երրորդ հանրապետությունը (1991-2000 թթ.): *Թեմա 9՝* Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 7, 7, 6 միավոր արժեքով:

Հիմնական գրականության ցանկը

1. Հայոց պատմություն. Հիմնահարցեր. խմբ. Հր. Ռ. Սիմոնյան, Երեւան, 2000.
2. Պարսամյան, Վ. Հայ ժողովրդի պատմություն. հ. 3-րդ, Երևան, 1967:
3. Կարապետյան, Մ. Ս. Հայաստանը 1912-1920 թվականներին. Երևան, Զանգակ-97, 2003.
4. Կարապետյան, Մ., Գևորգյան, Է. Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին. Երևան, 2007:

0301/B05	Փիլիսոփայության հիմունքներ	4 կրեդիտ
4 ժամ	48/16/0	
III կիսամյակ	Հանրագումարային	
<p>Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված մարդուն և մասնագետին:</p>		
<p><i>Կրթական վերջնաարդյունքները</i></p> <p>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none">• կիմանա աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none">✓ (բուն մասնագիտական կարողություններ)• հասկանալու ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը:✓ (ընդհանրական կարողություններ)• Վերլուծելու և ամբողջական պատկերացում կազմելու արդի քաղաքակրթական, քաղաքական մշակութային և մարդաբանական պատկերացումների, տեխնածին քաղաքակրթության գլոբալ		

հիմնախնդիրների մասին:
Համառոտ բովանդակությունը. Թեմա 1՝ Փիլիսոփայության առարկան: Թեմա 2՝ Կեցություն և մատերիա: Թեմա 3՝ Դիալեկտիկա: Թեմա 4՝ Բնություն: Թեմա 5՝ Մարդ և պրակտիկա: Թեմա 6՝ Գիտակցություն և ճանաչողություն: Թեմա 7՝ Գիտություն: Թեմա 8՝ Հասարակություն: Թեմա 9՝ Մշակույթ: Անձ: Այլազգա:
Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները. Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատումը պարունակում է 4 հարց:
Հիմնական գրականության ցանկը 1. Կյուբեդյան Է., Փիլիսոփայություն, Եր., 2004: 2. Բրուսյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, հ. 1., Եր., 1987: 3. Բրուսյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, հ. 2., Եր., 1987: 4. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1976: 5. Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980: 6. Հակոբյան Ս., Փիլիսոփայության հիմունքներ, Եր., 1994: 7. Փիլիսոփայության բառարան, Եր., 1975: 8. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ /գլխ. խմբ. Խ. Իովչուկ, Եր., 1979:

ԿԱՍԸՆՏՆՈՒԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

0201/Յ01	Տնտեսագիտություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
IV կիսամյակ	Ստուգարք	
Ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:		

Կրթական վերջնաարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կյուրացնի տնտեսագիտության հիմունքները:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- հասկանալու տնտեսության շուկայական համակարգի կենսագործունեությունը, հիմնական հասկացությունները, կենսագործունեությունը, զարգացման օրինաչափությունները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- յուրացնելու ձեռնարկարություն ծավալելու, բանկերից օգտվելու հմտությունները:

Համառոտ բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: Թեմա 2՝ Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Թեմա 3՝ Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: Թեմա 4՝ Հասարակության քաղաքական համակարգը: Թեմա 5՝ Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Թեմա 6՝ Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Թեմա 7՝ Ընտրություններ և ընտրական համակարգեր: Թեմա 8՝ Քաղաքական գաղափարախոսություններ: Թեմա 9՝ Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

Հիմնական գրականության ցանկը

1. Ֆ. Սամուելսոն, Ու. Դ. Նորդհաուս, Տնտեսագիտություն, 2 հատորով, թարգմանություն անգլերենից, Եր., 1995-1997:
2. Ջ. Գորթնի, Տնտեսագիտություն, Եր., 1999:
3. К.Р.Макконнелл, Экономика, 14-ое издание. М. 2002.
4. Тесты и задачи по микро и макроэкономике. М., Изд- во Московского университета, 1994.

0301/BO3	Քաղաքագիտություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
IV կիսամյակ	Ստուգարք	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները</p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կունենա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • հասկանալու քաղաքագիտության առարկայական տիրույթն ու մեթոդաբանությունը: • կողմնորոշվելու գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում: ✓ (ընդհանրական կարողություններ) • կատարելու քաղաքագիտական վերլուծություններ: 		
<p>Համառոտ բովանդակությունը.</p> <p><i>Թեմա 1՝ Քաղաքագիտության ինստիտուցիոնալ կայացման գործընթացը: Թեմա 2՝ Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Թեմա 3՝ Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: Թեմա 4՝ Հասարակության քաղաքական համակարգը: Թեմա 5՝ Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Թեմա 6՝ Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Թեմա 7՝ Ընտրություններ և ընտրական համակարգեր: Թեմա 8՝ Քաղաքական գաղափարախոսություններ: Թեմա 9՝ Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները:</i></p>		
<p>Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.</p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար</p>		

պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

Հիմնական գրականության ցանկը

1. Քաղաքագիտության ներածություն, Երևան, 1996:
2. Մանուշարյան Հ., Դրվագներ. հայ քաղաքական մտքի պատմություն, Երևան, 2002:
3. Альмонд Г., Пауэлл Д., Сравнительная политология сегодня, М.-2003:

0301/В04	Իրավագիտություն	2 կրեդիտ
-----------------	------------------------	-----------------

2 ժամ	32/0/0	
--------------	---------------	--

IV կիսամյակ	Ստուգարք	
--------------------	-----------------	--

Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:

Գրթական վերջնաարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը:
- կիմանա օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- հասկանալու կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառելու իրավական ոլորտին առնչվող ունակություններն ու հմտությունները:

Համառոտ բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասարակություն և պետություն: *Թեմա 2՝* Իրավունքի ձևերը: *Թեմա 3՝* Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: *Թեմա 4՝* Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: *Թեմա 5՝* Սահմանադրական իրավունք: *Թեմա 6՝* Դա-

<p>տական իշխանություն և դատական համակարգ: <i>Թեմա 7՝</i> Քաղաքացիական իրավունք: <i>Թեմա 8՝</i> Աշխատանքային իրավունք: <i>Թեմա 9՝</i> Ընտանեկան իրավունք: <i>Թեմա 10՝</i> Էկոլոգիական իրավունք: <i>Թեմա 11՝</i> Քրեական իրավունք: <i>Թեմա 12՝</i> Դատավարական իրավունք: <i>Թեմա 13՝</i> Միջազգային իրավունք:</p>
<p>Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամաբոված հարցաշարից), որոնցից առնվազն երկուսին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:</p>
<p>Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Խրոպանյուկ Ո., Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997: 2. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Եր., 2002: 3. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Եր., 2003:

0202/B01	Մշակութաբանություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
III կիսամյակ	Ստուգարք	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային և հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կունենա համապարփակ գիտելիքներ գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • պատկերացնելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությաունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական 		

<p>օրինաչափությունները:</p> <p>✓ (ընդհանրական կարողություններ)</p> <ul style="list-style-type: none"> • կիրառելու համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները:
<p>Համառոտ բովանդակությունը.</p> <p><i>Թեմա 1՝</i> Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խընդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: <i>Թեմա 2՝</i> Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: <i>Թեմա 3՝</i> Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: <i>Թեմա 4՝</i> Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները՝ մոտեցումներ, հարցադրումներ, օրինաչափություններ: <i>Թեմա 5՝</i> Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:</p>
<p>Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.</p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:</p>
<p>Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Սարգսյան Ա. Մշակութաբանություն, Եր., 1996թ. 2. Հովհաննիսյան Ս. Կուլտուրան և բնությունը Եր. 1984թ. 3. Գուրնիչ Պ. Մշակութաբանություն, Եր., 2002: 4. Մելքունյան Գ. Մշակութաբանություն, Եր., 2001: 5. Культурология. История мировой культуры. М., 1995г. 6. Введение в культурологию. М., 1999. 7. Маргарян Э. С. О концепции локальных цивилизаций. Е. 1962г. 8. Теречян. Культура древней Армении. Е.1998г. 9. Куменцкий К. История культуры древней Греции и Рима. М. 1990г. 10. Культура эпохи возрождения и реформации.М. 1996г. 11. Актуальные проблемы культуры 20- ого в. М.2002г.

0301/В06	Կրթության պատմություն	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	

III կիսամյակ	Ստուգարք
<p>Դասընթացի նպատակն է ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:</p>	
<p>Կրթական վերջնաարդյունքները</p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնաձիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնաձիսական համակարգը: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • հասկանալու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները: ✓ (ընդհանրական կարողություններ) • կատարելու տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում: 	
<p>Համառոտ բովանդակությունը.</p> <p><i>Թեմա 1՝</i> Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: <i>Թեմա 2՝</i> Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: <i>Թեմա 3՝</i> Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: <i>Թեմա 4՝</i> Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: <i>Թեմա 5՝</i> Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: <i>Թեմա 6՝</i> Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: <i>Թեմա 7՝</i> Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: <i>Թեմա 8՝</i> Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: <i>Թեմա 9՝</i> Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: <i>Թեմա 10՝</i> Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:</p>	
<p>Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.</p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3</p>	

հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. История религии Т. 1-2. М., 2002.
2. Алов А. А., Владимирон Н. Г., Овсиенко Ф. Г., Мировые религии, - М., 1998.
3. Encyclopedia of religion and ethics, New York, 1961-1964.
4. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002:
5. Աստվածաշունչ:
6. Գուրան, Սոֆիա, 1929:
7. Երուանդ Վրդ. Տէր-Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա, (Հին եկեղեցին), Էջմիածին, 1908:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**

0101/B02	Համակարգչից օգտվելու հմտություններ	2 կրեդիտ
2 ժամ	8/24/0	
II կիսամյակ	Ստուգարք	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգչերի, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու ու վերլուծություններ կատարելու համար:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կկարողանա հասկանալ համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները: <p><i>Ունակ կլինի.</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • յուրացնելու օպերացիոն համակարգի, բազմախնդրայնության առանձնահատկությունները: 		

<ul style="list-style-type: none"> • հասկանալու տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: ✓ (ընդհանրական կարողություններ) • ինքնուրույն կատարելու իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):
<p>Համառոտ բովանդակությունը.</p> <p><i>Թեմա 1՝</i> Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները:</p> <p><i>Թեմա 2՝</i> Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: <i>Թեմա 3՝</i> Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: <i>Թեմա 4՝</i> Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:</p>
<p>Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.</p> <p>Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:</p>
<p>Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Краинский И. Word 2007. – СПб, Питер-2008, 240с., ил. (Серия <<Популярный самоучитель>>). Эл. Книга. 2. Уокенбад, Джон. Microsoft Office Excel 2007. Пер. С. Англ., М., “И. Д. Вильямс” – 2008, 816 С., эл. книга. 3. Тибомиров А. Н., Продки А. К., Колосков П. В., Клеандрова И. А. и др.- Microsoft Office 2007. Все программы пакета. СПб. Наука и техника, 2008, 608с., эл.книга.

0001/В05	Քաղաքացիական պաշտպանություն	2 կրեդիտ
2 ժամ	24/8/0	
VI կիսամյակ	Մտուցարք	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում (<i>երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային</i></p>		

<p><i>ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:</i></p>
<p><i>Կրթական վերջնաարդյունքները</i> Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կիմանա ԱԻ պայմաններում ձեռնարկվող միջոցառումների շարքը: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • իրականացնել պաշտպանություն ԱԻ-ում : ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • ժամանակին և ճիշտ իրականացնել պաշտպանվելու ձևերն ու մեթոդները ԱԻ-ում և պատերազմական պայմաններում:
<p><i>Համառոտ բովանդակությունը.</i> <i>Թեմա 1՝ Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: Թեմա 2՝ Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: Թեմա 3՝ Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Թեմա 4՝ Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Թեմա 5՝ Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: Թեմա 6՝ Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Թեմա 7՝ Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:</i></p>
<p><i>Մտուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.</i> Մտուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:</p>
<p><i>Հիմնական գրականության ցանկը</i></p> <ol style="list-style-type: none"> 1. Մարկարյան Ռ.Վ., Ջանջուղազյան Ն.Ա., Օհանջանյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ա., Հարությունյան Վ.Ս., Բաղդասարյան Լ.Լ., Հասրաթյան Ռ.Ց., Վարդանյան Ջ.Հ. “Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր”, Երևանի համալս. հրատ.,

2006, 238 էջ

2. Л.А. Николаев, “Основы защиты от оружия массового поражения”, Минск, “Вышэйшая школа”, 1988
3. “Это должен знать и уметь каждый”, серия “Гражданская оборона СССР”, М., Воениздат, 1985
4. В.М. Емельянов, В.Н. Коханов, П.А. Некрасов “Защита населения и территорий в чрезвычайных ситуациях”, М.: Академический Проект: Трикста, 2005, 480 стр.

0001/В06	Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	2 կրեդիտ
2 ժամ	24/8/0	
VI կիսամյակ		
<p>Դասընթացների նպատակն է ուսանողներին սովորեցնել էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճանապարհային ախտահարում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) մինչբժշկական օգնության ցուցաբերում:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները</p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կիմանա էքստրեմալ պայմաններում առաջին բուժօգնության ցուցաբերելու գործողությունների շարքը: <p><i>Ունակ կլինի.</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • ճիշտ կողմնորոշվելու էքստրեմալ պայմաններում բժշկական օգնություն ցուցաբերելու առումով: ✓ (ընդհանրական կարողություններ) • ցույց տալ մինչբժշկական օգնություն: 		
<p>Համառոտ բովանդակություն.</p> <p><i>Թեմա 1՝</i> Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: <i>Թեմա 2՝</i> Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: <i>Թեմա 3՝</i> Սուր հիվանդություններ և թունավորումներ: <i>Թեմա 4՝</i> Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ</p>		

<p>իրավիճակներում: <i>Թեև 5` Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:</i></p>
<p>Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները. Ստուգարքը ընթանում է բանավոր` հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը` տեսական, մեկը` գործնական:</p>
<p>Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Հեղինակների կողմից, Մինչքոշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում, ուսումնական ձեռնարկ, Երևանի համալս. հրատ., 2007: 2. Կ.Ա. Մանասյան, Սիրտ-թոքային վերակենդանացման մինչքոշկական մեթոդների ուսուցումը, ուսումնամեթոդական աշխատանք, Եր., Երևանի համալս. հրատ., 2007: 3. Ադամյան Մ.Խ., Փոխադրական անշարժացում, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2011: 4. Ուսումնական ձեռնարկ բուժքույրերի պատրաստման համար, Եր., Լույս հրատ., 1983:

0103/B01	Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
I կիսամյակ	Ստուգարք	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները</p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կյուրացնի էկոլոգիայի որպես գիտության ձևավորման մասին, կենդանիների և բույսերի էկոլոգիայի մասին, էկոհամակարգի, կենսացենոզի և նոոսֆերայի ուսմունքների, մարդկության կայուն զարգացման սկզբունքների մասին գիտելիքներ: <p><i>Ունակ կլինի.</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • կատարելու էկոլոգիական վիճակի վերլուծություններ և հանգե- 		

լու համապատասխան եզրակացությունների:

- կատարելու ջրի, հողի և օդի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական անալիզներ:
- ✓ (ընդհանրական կարողություններ)
- պատկերացնելու անթրոպոգեն էկոհոմակարգերի զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները:

Համառոտ բովանդակություն.

Թեմա 1` Էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: Էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: *Թեմա 2`* Էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: *Թեմա 3`* Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: *Թեմա 4`* Էներգիան էկոհամակարգերում: Մննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: *Թեմա 5`* Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: *Թեմա 6`* Բնական պաշարների դասակարգումը: Գոյքալ արտադրություն և քայքայում: *Թեմա 7`* Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: *Թեմա 8`* Պոպուլյացիոն էկոլոգիա: *Թեմա 9`* Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գոյքալ էկոլոգիական պրոբլեմներ:

Մտուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Մտուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր.: Զանգակ – 97, 2010.
2. Մարտիրոսյան Մ., Գրիգորյան Կ.Վ., Եսայան Ա.Հ. Բնապահպանություն և աստվածաբանություն, Վաղարշապատ, 2007.
3. Գրիգորյան Կ.Վ., Եսայան Ա.Հ., Ժամհարյան Հ.Գ., Խոյեցյան Ա.Վ., Մովսեսյան Հ.Ս., Փիրուկյան Գ.Պ. <<Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ>>: Երևան 2010:
4. Մելքոնյան Լ. <<Էկոլոգիայի հիմունքներ>>, Երևան 2008: Մախիյան Ռ.Ա., Եղիազարյան Ս.Խ., Դավթյան Ն.Հ. <<Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ>> Երևան 1993թ. ՀՀ բնապահպանության նախարարություն:
5. Маврищев В.В. Основы общей экологии, Минск, 2000.

6. Демина Т.А. Экология, природопользование, охрана окружающей среды, “Аспект пресс”, М., 2000.
7. Воронцов Н.Н. и др. Эволюция органического мира, М., 2000.
8. Воронков Н.А. Основы общей экологии, “Агар”, М, 1999.
9. Гирусов Э.В. и др. Экология и экономика природопользования, М., 1998.
10. Грант В. эволюционный процесс, “Мир”, М., 1989.
11. Бигон М. и др. Экология, “Мир”, М., 1989.
12. Одум Ю. Основы экологии, “Мир”, М., 1975. Գրիգորյան Կ.Վ. և ուրիշներ, Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր.: Զանգակ – 97, 2010.

ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

0101/B01	Մաթեմատիկայի հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
I կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողների մտածողության զարգացում, վերացական մտածողության ձևավորում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
<ul style="list-style-type: none"> • կիմանա մաթեմատիկայի պատմությունը: 		
<i>Ունակ կլինի</i>		
✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i>		
<ul style="list-style-type: none"> • հասկանալու մաթեմատիկական մտածողության իմաստը: 		
✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i>		
<ul style="list-style-type: none"> • լուծել պարզագույն կիրառական խնդիրներ: 		
Համառոտ բովանդակություն		
Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզու: Աքսիոմային մոտեցումը մաթեմատիկայի: Բազմությունների տեսության տարրերը: Կոորդինատների մեթոդ: Մաթեմատիկական մոդելավորում: Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերը:		
Գնահատման մեթոդներն ու չափանիշները		
Մեկ բանավոր ստուգարք՝ հարցազրույցի ձևով:		

Հիմնական գրականության ցանկը

1. Աթաբեկյան Վ. և ուրիշներ Մաթեմատիկա հումանիտար մասնագիտությունների համար: ԵՊՀ, Երևան-2004թ.
2. Тихомиров Н.Б., Шелехов А.М., Математика, учебный курс для юристов, Москва, Юрайт, 2000г.

0102/В01	Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
I կիսամյակ	Մտուցարք	
<p>Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները</p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none">• կիմանա բնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության հիմնական սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none">✓ (բուն մասնագիտական կարողություններ)• հասկանալու բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները:✓ (ընդհանրական կարողություններ)• լուծել ոչ բարդ բնագիտական խնդիրներ:		
<p>Համառոտ բովանդակություն.</p> <p><i>Թեմա 1՝</i> Բնագիտության առարկան: Օրինաչափությունները և զարգացման հիմնական փուլերը: <i>Թեմա 2՝</i> Բնագիտական և հումանիտար մշակույթներ: <i>Թեմա 3՝</i> Աշխարհի մեխանիստական պատկերը: <i>Թեմա 4՝</i> Դասական թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի կոնցեպցիաները: <i>Թեմա 5՝</i> Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: <i>Թեմա 6՝</i> Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: <i>Թեմա 7՝</i> Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցույթ-</p>		

յունների կոնցեպցիաները: *Թեմա 8*՝ Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: *Թեմա 9*՝ Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: *Թեմա 10*՝ Աստղերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: *Թեմա 11*՝ Սոլրակների կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: *Թեմա 12*՝ Տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: *Թեմա 13*՝ Քվանտային կոսմոլոգիա: Անթրոպային սկզբունք: *Թեմա 14*՝ Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: *Թեմա 15*՝ Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Մտուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.
 Մտուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. В. Воронов, М., Гречнева, Р., Сагдеев, М. Основы современного естествознания. М., 1999.
2. А. Бабушкин, М. Концепции современного естествознания. С.П., 2004.
3. Браун, Т., Лемей, Г. Химия в центре наук. М. 1983.
4. Фримантл, М. Химия в действии, М., 2001.
5. О. Коротцев, Астрономия для всех, 2004, 300 с.
6. Խաչատրյան, Ա. Էներգիայի պրոբլեմը, շրջակա միջավայրը և քիմիան. Երևան, 1982, էջ 32.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

0304/B10	Լատիներեն	2 կրեդիտ
2 ժամ	0/0/32	
I կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել համաշխարհային պատմության և ներկայիս մշակույթի համար կարևոր նշանակություն ունեցող դասական լատիներենը, ցույց տալ նրա գործնական ու տեսական արժեքը նրանց հիմնական մասնագիտության յուրացման հարցում:		
<i>Կրթական վերջնաարդյունքները</i>		

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա միջազգային հաղորդակցման համար անհրաժեշտ դեր ունեցող լատինական այբուբենը, բոլոր գիտակարգերում կիրառվող տերմինները, քերականական տերմինների ակունքները:

Ունակ կյինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- բացահայտելու մշակութային կյանքի շատ նրբություններ՝ լատինական բառերի ներքին բովանդակության բացահայտման շնորհիվ:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- հասկանալու ժամանակակից լեզուներում, տարբեր ոլորտներում և այլուր գործածվող շատ հասկացություններ:

Համառոտ բովանդակություն.

Թեմա 1՝ Լատիներենի բառային կազմը: *Թեմա 2՝* Հոլովման համակարգը: *Թեմա 3՝* Խոնարհման համակարգը: *Թեմա 4՝* Ածականների համեմատության աստիճանները և հոլովումը: *Թեմա 5՝* Շարահյուսական առանձնահատկությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Л. Винничук Латинский язык, Москва «Высшая школа» 1985.
2. В. Ярхо, В. Лободы Латинский язык, Москва «Просвещение» 1983.
3. В. Мирошенкова, Н. Федоров Учебник латинского языка, «Издательство Московского университета» 1985.
4. Ա. Հայրապետյան, Ն. Մկրտչյան Լատիներենի ձևաբանություն, ԵՊՀ հրատ, Եր., 2004:
5. Գ. Տիրացյան Լատիներեն լեզվի ուսումնական ձեռնարկ, Եր., 2005:

0302/B55

Գրաբար

2 կրեդիտ

2 ժամ	0/0/32
II կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:</p>	
<p>Կրթական վերջնաարդյունքները</p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կյուրացնի գրաբարի հնչյունական, ուղղագրական, հնչյունափոխական, բառային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները: • կկարողանա կարդալ և հասկանալ գրաբարյան բնագրերը: <p><i>Ունակ կլինի.</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • կատարելու գրաբարյան բնագրերի հնչյունաբանական, բառապաշարային վերլուծություններ: ✓ (ընդհանրական կարողություններ) • կատարելու անհրաժեշտ թարգմանություններ՝ ստեղծագործաբար կիրառելով ունեցած գիտելիքները: 	
<p>Համառոտ բովանդակություն.</p> <p><i>Թեմա 1՝</i> Գրաբարը՝ որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: <i>Թեմա 2՝</i> Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: <i>Թեմա 3՝</i> Բայ. դերբայներ, խոնարհում, անկանոն բայեր: <i>Թեմա 4՝</i> Գոյական. հոլովներ և հոլովումներ: <i>Թեմա 5՝</i> Դերանուն. դերանվանական հոլովում. մյուս խոսքի մասերը: <i>Թեմա 6՝</i> Գրաբարի շարահյուսական հիմնական առանձնահատկությունները: Գրաբարյան բնագրերի թարգմանություններ և վերլուծություններ:</p>	
<p>Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները</p> <p>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:</p> <p><i>Ստուգման ձևերն են.</i></p> <p><i>1-ին ստուգում.</i> Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><i>2-րդ ստուգում.</i> Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:</p>	
Հիմնական գրականության ցանկ	

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ. Եր., 1977:
2. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ. Եր., 2003:
3. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Պալյան Խ., Դասական գրաբարի հատընտիր, Եր., 1988:

0305/B43	Անգլերեն լեզու - 1	12 կրեդիտ
12 ժամ	0/0/192	
I կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողի արտասանական հմտությունները, նպաստել հնչյունների ճիշտ արտաբերմանը՝ տալով նրանց ոչ միայն գործնական, այլև համառոտ տեսական գիտելիքներ հնչյունաբանությունից: Ջուզահեռ կատարվում է նաև գործնական քերականական ամրապնդում ժամանակային ձևերի միջոցով, ինչպես նաև միջնակարգ դպրոցում յուրացված ընդհանուր գործածության բառապաշարի ընդլայնում:</p>		
<p>Կրթական արդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կյուրացնի անգլերենի արտասանության օրենքները: <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> • կիրառել արտասանության համառոտ և հիմնական գիտելիքները: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> • ճիշտ արտաբերել անգլերենի հնչյունները: 		
<p>Համառոտ բովանդակություն. <i>Թեմա 1՝</i> Անգլերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները: Հնչյունների դասակարգումը: <i>Թեմա 2՝</i> Բաղաձայններ (դասակարգումն ըստ արտաբերման տեղի և ձևի): <i>Թեմա 3՝</i> Չայնավորներ (դասակարգումն ըստ լեզվի բարձրության և դիրքի): <i>Թեմա 4՝</i> Բնագիր ստեղծագործությունների արտալսարանային ընթերցում և վերլուծում:</p>		
<p>Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները <i>Ընթացիկ քննություններ</i> Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրա-</p>		

<p>քանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:</p> <p><i>Եզրափակիչ քննություն</i></p> <p>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայքայ 0,5 է:</p>
<p><i>Հիմնական գրականության ցանկ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. Baker, A. Ship or Sheep. CUP, 1980. 2. Mortimer, C. Stress Time. CUP, 1978. 3. O'Connor, J. D. Intonation Course. CUP, 1970. 4. O'Connor, J.D. A Course of English Pronunciation. London: BBC, 1970. 5. Vardanian, S. Pronunciation Practice. Yerevan, 1989. 6. Alexander, L.G. Developing Skills. London: Longman, 1970.

0305/B44	Անգլերեն լեզու - 2	14 կրեդիտ
14 ժամ	0/0/224	
II կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է խորացնել ուսանողի լեզվական և քերականական գիտելիքները, հարստացնել բառապաշարը և կատարելագործել նրանց հաղորդակցվելու հմտությունները, զարգացնել գրավոր խոսքը:</p>		
<p><i>Կրթական վերջնաարդյունքները</i></p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կտիրապետի բանավոր և գրավոր խոսքին: <p><i>Ունակ կլինի.</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • թարգմանելու անգլերեն բնագիր տեքստեր, • հաղորդակցվելու գրավոր և բանավոր խոսքով: ✓ (ընդհանրական կարողություններ) • զարգացնելու գրավոր խոսքի հմտություններ: 		
<p><i>Համառոտ բովանդակություն.</i></p> <p><i>Թեմա 1՝</i> Ձևաբանություն (խոսքի մասեր՝ գոյական, ածական, մակբայ, նախդիրներ, թվական, շաղկապ): <i>Թեմա 2՝</i> Տնային ընթերցանու-</p>		

<p>թյուն (գեղարվեստական ստեղծագործությունների արտալսարանային ընթերցում և վերլուծում): <i>Թեմա 3</i>՝ Գրավոր պրակտիկա (ուղղագրական կանոններ, թելադրություն, փոխադրություն): <i>Թեմա 4</i>՝ Բառապաշար (բազմիմաստություն, նույնանուն և հականիշ միավորներ):</p>
<p>Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները <i>Ընթացիկ քննություններ</i> Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: <i>Եզրափակիչ քննություն</i> Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>
<p>Հիմնական գրականության ցանկ</p> <ol style="list-style-type: none"> 1. Baker, A. Ship or Sheep. CUP, 1980. 2. Mortimer, C. Stress Time. CUP, 1978. 3. O'Connor, J. D. Intonation Course. CUP, 1970. 4. O'Connor, J.D. A Course of English Pronunciation. London: BBC, 1970. 5. Vardanian, S. Pronunciation Practice. Yerevan, 1989. 6. Alexander, L.G. Developing Skills. London: Longman, 1970. 7. Thomson, A.J., Martinet, A.V. Practical English Grammar. OUP, 1986.

0305/B45	Անգլերեն լեզու - 3	9 կրեդիտ
8 ժամ	0/0/128	
III կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է ընդլայնել ուսանողի ընդհանուր գործածական բառապաշարը, ծանոթացնել անգլիական և ամերիկյան գրականության լավագույն նմուշներին, կազմակերպել քննարկումներ, զարգացնել գրավոր խոսքը:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կյուրացնի քերականության ձևաբանություն բաժնի մի մասը: 		

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- **հասկանալու ուսումնասիրվող լեզուն կրող ժողովրդի մշակութային առանձնահատկությունները:**

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- **ընդլայնել ընդհանուր և թեմատիկ բառապաշարը:**

Համառոտ բովանդակություն.

Թեմա 1՝ Ձևաբանություն (բայի անդեմ ձևերը. մոդալ բայեր): *Թեմա 2՝* Գրավոր պրակտիկա (թելադրություն, թեստ, պարբերություն): *Թեմա 3՝* Շարահյուսություն. նախադասության տիպերն ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություն: *Թեմա 4՝* Բառապաշարի ոճական տարբերակում (նշույթավորված, չնշույթավորված միավորներ):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Debska, A. Upgrade Your English. OUP, 1989.
2. Edilyan, L. & others A Course in Written Practice. Yerevan: Asogik 2003.
3. Gasparyan, S., et al. English for University Students. Yerevan: YSU, 2005.
4. Vince, M. Certificate Language Practice. Macmillan, 1998.
5. Մխիթարյան, Ե. Անգլերեն շարահյուսական վարժություններ, Եր., 1988:
6. Thomson, A.J., Martinet, A.V. Practical English Grammar. OUP, 1986.

0305/B46	Անգլերեն լեզու - 4	8 կրեդիտ
8 ժամ	0/0/128	
IV կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցվելու ունակությունները, հարստացնել բառապաշարը, պատկերացում տալ շարահյուսության խնդիրների մասին:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կյուրացնի քերականության <<Շարահյուսություն>> բաժինը: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • տիրապետելու լեզվի հիմնական կառույցներին: ✓ (ընդհանրական կարողություններ) • ձեռք բերելու անգլերենով ազատ հաղորդակցվելու հմտություններ: 		
<p>Համառոտ բովանդակություն. <i>Թեմա 1՝</i> Բառապաշար (դարձվածային կապակցություններ, բառի ձևաբանական կառուցվածքը, բառակազմության հիմնական միջոցները): <i>Թեմա 2՝</i> Քերականություն (երկրորդական /օժանդակ/ խոսքի մասեր, հոդեր, նախդիրներ, շաղկապներ, եղանակավորող բառեր, բառ-մասնիկներ): <i>Թեմա 3՝</i> Շարահյուսություն (երկրորդական նախադասության տիպերը): <i>Թեմա 4՝</i> Գրավոր պրակտիկա (շարադրություն, պարբերություն):</p>		
<p>Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները <i>Ընթացիկ քննություններ</i> Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: <i>Եզրափակիչ քննություն</i> Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>		
<p>Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Debska, A. Upgrade Your English. OUP, 1989. 2. Edilyan, L. & others A Course in Written Practice. Yerevan: Asogik 		

2003.

3. Gasparyan, S., et al. English for University Students. Yerevan: YSU, 2005.
4. Vince, M. Certificate Language Practice. Macmillan, 1998.
5. Մխիթարյան, Ե. Անգլերեն շարահյուսական վարժություններ, Եր., 1988:
6. Thomson, A.J., Martinet, A.V. Practical English Grammar. OUP, 1986.

0305/B47	Անգլերեն լեզու - 5	10 կրեդիտ
10 ժամ	0/0/160	
V կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գործնական հաղորդակցման հմտություններ տարբեր բնագավառներում, օտարերկրում կողմնորոշում, նորությունների հաղորդում, հայտնի մարդկանց մասին տեղեկությունների փոխանակում, ինչպես նաև գրավոր խոսքի զարգացում և ուղղագրական կանոնների ամրապնդում:</p>		
<p><i>Կրթական վերջնաարդյունքները</i> Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կտիրապետի որոշակի թեմատիկ բառապաշարի և քերականական կառույցների, որոնք անհրաժեշտ են այս կամ այն արտալեզվական իրավիճակում: <p><i>Ունակ կլինի.</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> <ul style="list-style-type: none"> • ձեռքագատվելու որոշակի բարդություններից, որոնք հատուկ են օտար լեզու սովորողներին հաղորդակցման ոլորտում: ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> <ul style="list-style-type: none"> • վերլուծաբար գնահատելու բոլոր լեզվական և արտալեզվական իրավիճակները: 		
<p><i>Համառոտ բովանդակությունը.</i> <i>Թեմա 1՝</i> Ճանապարհորդական իրավիճակներում հանդիպող որոշակի բառապաշար, հողերի և նախդիրների օգտագործումը այդ բառապաշարի շրջանակներում: <i>Թեմա 2՝</i> Դարձվածաբանական միավորներ, հոմանիշների ու հականիշների յուրահատկությունները: <i>Թեմա 3՝</i> Նախածանցների ու վերջածանցների կառուցվածքային յուրա-</p>		

հատկությունները թեմատիկ բառապաշարում: *Թեմա 4՝ Ակնարկի ոճի հմտությունների զարգացում:*

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները
Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Carrier, M. New Connections. Vol. 8,10. Penguin Books, 1989.
2. Jones, L. New Progress to Proficiency. CUP, 2002.
3. Kuyumjian, S., Galstyan, S. Insight into English. Yerevan, 2003.
4. McRae, J., Doardman, R. Reading Between Lines. CUP, 1988.
5. Milton, W. Techmiques for Writing Composition. Fresno, 1985.
6. Vince, M. Advanced Language Practice.. Mcmillan, 2004.

0305/B48	Անգլերեն լեզու - 6	9 կրեդիտ
8 ժամ	0/0/128	
VI կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է զարգացնել հասարակական, քաղաքական և երկրագիտական բնույթի տեքստերի հետ աշխատելու հմտություններ, հարստացնել ուսանողների բառապաշարը վերոհիշյալ ոլորտներում, զարգացնել անգլիական և ամերիկյան գեղարվեստական գրականությունների լավագույն նմուշները, նրանցում տեղ գտած լեզվաոճական հնարները, գլխավոր և երկրորդական կերպարներ վերլուծելու հմտությունները:</p>		
<p><i>Կրթական վերջնաարդյունքները</i> Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կյուրացնի դասընթացի սահմաններում նախատեսված բա- 		

<p>ռապաշարը: <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • վարելու գրույցներ հասարակական-քաղաքական թեմաներով: • տիրապետելու գեղարվեստական գրականության մեջ առկա լեզվաոճական հնարներին: ✓ (ընդհանրական կարողություններ) • ձեռք բերելու վերլուծական հմտություններ տարբեր ոլորտներում:</p>
<p>Համառոտ բովանդակություն. <i>Թեմա 1՝</i> Մամուլի տեսություն (լրագրային նյութերի ընկալում և վերարտադրում): <i>Թեմա 2՝</i> Գրավոր պրակտիկա (կուրսային աշխատանքների լեզուն և ոճը): <i>Թեմա 3՝</i> Վերապատումի և կարճ շարադրանքի ոճերի շարադրանքների առանձնահատկությունները: <i>Թեմա 4՝</i> Ոչ կադապարային կառուցվածքի ներմուծում և կիրառում:</p>
<p>Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները <i>Ընթացիկ քննություններ</i> Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: <i>Եզրափակիչ քննություն</i> Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>
<p>Հիմնական գրականության ցանկը 1. Carrier, M. New Connections. Vol. 8,10. Penguin Books, 1989. 2. Jones, L. New Progress to Proficiency. CUP, 2002. 3. Kuyumjian, S., Galstyan, S. Insight into English. Yerevan, 2003. 4. McRae, J., Doardman, R. Reading petween Lines. CUP, 1988. 5. Milton, W. Techmiques for Writing Composition. Fresno, 1985. 6. Vince, M. Advanced Language Practice. Mcmillan, 2004.</p>

0305/B49	Անգլերեն լեզու - 7	6 կրեդիտ
----------	--------------------	----------

6 ժամ	0/0/96
VII կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց
Դասընթացի նպատակն է ամրապնդել ուսանողների ստեղծագործական հմտությունները և ակտիվացնել անգլերենով ազատ հաղորդակցումը ամենաբազմազան թեմաներով:	
Կրթական վերջնաարդյունքները	
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.	
<i>Գիտելիք և իմացություն</i>	
<ul style="list-style-type: none"> • կյուրացնի գեղարվեստական տեքստերի ժանրային և սյուժետային առանձնահատկությունները: 	
<i>Ունակ կլինի</i>	
✓ (բուն մասնագիտական կարողություններ)	
<ul style="list-style-type: none"> • հաղորդակցվելու կենցաղային, հասարակական-քաղաքական, - գիտական և մասնագիտական թեմաներով: 	
✓ (ընդհանրական կարողություններ)	
<ul style="list-style-type: none"> • ձեռք բերելու լրագրային նյութը վերարտադրելու հմտություններ: 	
Համառոտ բովանդակություն.	
Վերլուծական ընթերցանություն (գեղարվեստական բովանդակության վերլուծություն): Գրավոր պրակտիկա (հասարակական-քաղաքական և մշակութային տեքստերի թարգմանություն):	
Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները	
<i>Ընթացիկ քննություններ</i>	
Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:	
<i>Եզրափակիչ քննություն</i>	
Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:	
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:	
Հիմնական գրականության ցանկը	
<ol style="list-style-type: none"> 1. Smoke, T. Making a Difference. Boston: Houghton Mifflin, 1994. 2. Taska, B. K. American Patchwork. USA: USIA, 1995. 3. Gannon, M.J. Understanding Global Cultures. CA: Sage, 2004. 	

0305/B50	Անգլերեն լեզու - 8	2 կրեդիտ
8 ժամ	/00/32	
VIII կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու հմտությունները և ձեռք բերել տարբեր տիպի հետազոտական աշխատանքներ կատարելու կարողություններ:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կունենա հղկված գրավոր և բանավոր խոսք: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • վարելու բազմաբնույթ քննարկումներ պատշաճ մակարդակով: ✓ (ընդհանրական կարողություններ) • տիրապետելու գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններին: 		
<p>Համառոտ բովանդակություն. Գիտահետազոտական աշխատանքներ: Քննարկումներ բազմազան թեմաներով:</p>		
<p>Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները <i>Ընթացիկ քննություններ</i> Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><i>Եզրափակիչ քննություն</i> Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>		
<p>Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Smoke, T. Making a Difference. Boston: Houghton Mifflin, 1994. 2. Taska, B. K. American Patchwork. USA: USIA, 1995. 3. Gannon, M.J. Understanding Global Cultures. CA: Sage, 2004. 		

0305/B51	2-րդ մասնագիտակ. օտար լեզու - 1 /Ֆրանսերեն/	8 կրեդիտ
8 ժամ	0/0/128	
III կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
<p>Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական–ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և ազատ հաղորդակցվելու կարողություններ:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները: • կիմանա հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները, տառադարձման սկզբունքները, ուսուցման տվյալ փուլում նախատեսված բառապաշարը, ֆրանսերենի քերականական կառույցների և ուղղագրության հիմնական կանոնները: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • ճիշտ արտաբերելու ֆրանսերենի առանձին հնչյունները և դրանց արտասանական տարբերակները, ինքնուրույն կատարելու տառադարձում, • ձեռք բերած քերականական գիտելիքների հիման վրա կառուցելու նախադասություններ և գործադրելու դրանք խոսքում, • ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու աղասպտացված տեքստեր: ✓ (ընդհանրական կարողություններ) • կատարելու տեքստի ձևաբանական վերլուծություն, • ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները: 		
<p>Համառոտ բովանդակություն. <i>Թեմա 1`</i> Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական–ուղղագրական առանձնահատկությունները: <i>Թեմա 2`</i> Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: <i>Թեմա 3`</i> Հոդ և հոդառություն: Հոդի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: <i>Թեմա 4`</i></p>		

Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Սեռ, թիվ, հոդ: *Թեմա 5*՝ Ածականի տեսակները: Համեմատության աստիճանների կազմության առանձնահատկությունները: *Թեմա 6*՝ Բայական համակարգի ընդհանուր բնութագիրը: *Թեմա 7*՝ Հաստատական և ժխտական նախադասություններ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները
 Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:
Ստուգման ձևերն են.
1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:
2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը
 1. Попова, И. Н., Казакова, Ж. А. Французский язык. М., 2008.
 2. Grégoire, M. Thiévenaz, Od. Grammaire progressive du français. (Niveau débutant).
 3. Miquel, Cl. Communication progressive du français (Niveau débutant).

0305/B52	2-րդ մասնագիտակ. օտար լեզու – 2 /Ֆրանսերեն/	10 կրեդիտ
10 ժամ	0/0/160	
IV կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացը նպատակ ունի խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները, հարստացնել ուսանողի բառապաշարը և զարգացնել նրա ուղղախոսական ունակությունները:		
Կրթական վերջնաարդյունքները		
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
<ul style="list-style-type: none"> • կունենա ամբողջական պատկերացում ֆրանսերենի հնչյունաբանության, ուղղախոսական-ուղղագրական նորմերի, հիմնական քերականական կառուցվածքի մասին: 		
<i>Ունակ կլինի</i>		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
<ul style="list-style-type: none"> • հաղորդակցվելու ֆրանսերենով: • կատարելու տեքստի շարահյուսական վերլուծություն: 		

<p>✓ (ընդհանրական կարողություններ)</p> <p>• ընթերցելու միջին բարդության տեքստեր:</p>
<p>Համատոտ բովանդակություն.</p> <p>Թեևս 1՝ Ածականի տեսակները և քերականական կարգերը: Թեևս 2՝ Դերանունների հիմնական տեսակները և դրանց քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Թեևս 3՝ Թվականներ: Թվականների քերականական կարգերը: Թեևս 4՝ Բայ: Ընդհանուր բնութագիրը և բայերի դասակարգման սկզբունքները: Թեևս 5՝ Մակբայների տեսակները և քերականական կարգերը:</p>
<p>Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները</p> <p>Ընթացիկ քննություններ</p> <p>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p>Եզրափակիչ քննություն</p> <p>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>
<p>Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Попова, И. Н., Казакова, Ж. А. Французский язык. М., 2008. 2. Grégoire, M. Thiévenaz, Od. Grammaire progressive du français. (Niveau débutant). 3. Miquel, Cl. Communication progressive du français (Niveau débutant).

0305/B53	2-րդ մասնագիտակ. օտար լեզու - 3 /Ֆրանսերեն/	8 կրեդիտ
8 ժամ	0/0/128	
V կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու և գրականությունից օգտվելու կարողություններ:		
Կրթական վերջնաարդյունքները		

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կունենա ամբողջական պատկերացում ֆրանսերենի ձևաբանության և շարահյուսության մասին:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կատարելու տեքստի շարահյուսական վերլուծություն:
- ընթերցելու /բառարանի օգնությամբ/ մասնագիտական տեքստեր:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ընթերցելու գեղարվեստական գրականություն:

Համառոտ բովանդակություն.

Թեմա 1՝ Ֆրանսերենի բառակազմությունը: Առավել գործածական նախածանցներն ու վերջածանցները: *Թեմա 2՝* Ֆրանսերենի նախդիրների ընդհանուր բնութագիրը: Առավել գործածական նախդիրները: *Թեմա 3՝* Շաղկապների կարգերն ու տեսակները: *Թեմա 4՝* Հաստատական և ժխտական մասնիկները և դրրանց գործածության առանձնահատկությունները: *Թեմա 5՝* Շարահյուսություն: Նախադասության դասակարգման սկզբունքներն ու չափանիշները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Попова, И.Н., Казакова, Ж.А., Французский язык. М., 2008.
2. Grégoire, M., Thiévenaz, Od. Grammaire progressive du français. (Niveau intermédiaire).
3. Djoulhakian, M. Meliksétian, R., Mouradian, A. Manuel de français. Erevan, 2011.

0305/B54	2-րդ մասնագիտակ. օտար լեզու - 4 /ֆրանսերեն/	8 կրեդիտ
----------	---	----------

8 ժամ	0/0/128
VI կիսամյակ	Եզրափակիչ գնահատման դասընթաց
Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել ուսանողի՝ նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ձևավորել ֆրանսերեն լեզվով ինքնուրույն աշխատանք գրելու կարողություններ:	
<p>Կրթական վերնաաղյուսները</p> <p>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.</p> <p><i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կտիրապետի բավարար չափով ֆրանսերենի ուղղախոսական-ուղղագրական նորմերին, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկություններին: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • օգտվելու մասնագիտական գրականությունից: • գրելու միջին բարդության մասնագիտական աշխատանք՝ կուրսային աշխատանք, զեկուցում, թեզիս: ✓ (ընդհանրական կարողություններ) • ընթերցելու գեղարվեստական գրականություն: 	
<p>Համառոտ բովանդակություն.</p> <p><i>Թեմա 1՝</i> Բայի անդեմ ձևերը: Դերբայների դասակարգման սկզբունքներն ու չափանիշները: <i>Թեմա 2՝</i> Հարակատար դերբայի գործածության առանձնահատկությունները: <i>Թեմա 3՝</i> Դարձված և դարձվածաբանություն: <i>Թեմա 4՝</i> Շեշտ և հնչերանգ: <i>Թեմա 5՝</i> Հարցական նախադասությունների կազմության առանձնահատկությունները:</p>	
<p>Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները</p> <p><i>Ընթացիկ քննություններ</i></p> <p>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p><i>Եզրափակիչ քննություն</i></p> <p>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>	
Հիմնական գրականության ցանկը.	

1. Попова, И.Н., Казакова, Ж.А., Французский язык. М., 2008.
2. Grégoire, M., Thiévenaz, Od. Grammaire progressive du français. (Niveau intermédiaire).
3. Djoulhakian, M. Meliksétian, R., Mouradian, A. Manuel de français. Erevan, 2011.

0305/B55	2-րդ մասնագիտակ. օտար լեզու - 5 /Ֆրանսերեն/	9 կրեդիտ
8 ժամ	128/0/0	
VII կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները, ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու, գեղարվեստական և մասնագիտական գրականությունից ազատորեն օգտվելու կարողություններ:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կունենա բավարար պատկերացում ֆրանսերենի բառապաշարի տարբեր շերտերի մասին: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) <ul style="list-style-type: none"> • օտվելու մասնագիտական գրականությունից: • շարադրելու մտքերը հասարակական-քաղաքական և մշակութային թեմաներով: ✓ (ընդհանրական կարողություններ) <ul style="list-style-type: none"> • կարդալու բնագիր տեքստեր: 		
<p>Համառոտ բովանդակություն. <i>Թեմա 1՝</i> Ֆրանսերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը: Հիմնաշերտ և փոխառություններ: <i>Թեմա 2՝</i> Բառապաշարի հարստացման հիմնական միջոցները: Ներքին հնարավորություններ, փոխառություն և կաղապարում: <i>Թեմա 3՝</i> Հոմանիշություն և հակառակություն: Հոմանիշության առանձնահատկությունները: <i>Թեմա 4՝</i> Համառությունից դրսևորման առանձնահատկությունները: <i>Թեմա 5՝</i> Ֆրանսիական բառարանագրություն:</p>		
Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները		

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր: Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր:
Ստուգման ձևերն են.
 1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:
 2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Khatchatrian, S. Mouradian, A. L'Homme et son environnement. Erevan, 2009.
2. Grégoire, M., Thiévenaz, Od. Grammaire progressive du français (Niveau avancé).
3. Djoulhakian, M., Meliksétian, R., Mouradian, A. Manuel de français. Erevan, 2011.

0305/B56	2-րդ մասնագիտակ. օտար լեզու - 6 /Ֆրանսերեն/	2 կրեդիտ
6 ժամ	0/0/24	
VIII կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացը նպատակ ունի խորացնել և զարգացնել նախորդ կիսամյակներում ձեռք բերված գիտելիքները՝ շեշտը դնելով մասնագիտական տեքստերի վրա:		
Կրթական վերջնաարդյունքները		
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
<ul style="list-style-type: none"> • կտիրապետի բավարար չափով ֆրանսերենի լեզվաբանական տերմիններին: 		
<i>Ունակ կլինի</i>		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
<ul style="list-style-type: none"> • գործածելու ֆրանսերեն լեզվաբանական տերմինների հայերեն համարժեքները: • գրելու լեզվաբանական թեմայով ավարտական աշխատանք: 		
✓ (ընդհանրական կարողություններ)		
<ul style="list-style-type: none"> • զրուցելու բազմազան թեմաներով: 		
Համառոտ բովանդակություն.		
<i>Թեմա 1՝ Ֆրանսերենի լեզվաբանական տերմինաբանության ընդհա-</i>		

նուր բնութագիրը: Միայն ֆրանսերենին բնորոշ երևույթները նշանակող տերմիններ: *Թեմա 2՝* Լեզվաբանական տերմինների թարգմանության առանձնահատկությունները: Ուղղակի համարժեքներ և նկարագրական տարբերակներ: *Թեմա 3՝* Միայն հայերենին բնորոշ երևույթները նշանակող տերմինների ֆրանսերեն թարգմանության առանձնահատկությունները: *Թեմա 4՝* Լեզվաբանական տեքստի վերլուծություն և համառոտ վերաշարադրանք: *Թեմա 5՝* Լեզվաբանական տեքստի թարգմանության առանձնահատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները
Ընթացիկ քննություններ
 Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Եզրափակիչ քննություն
 Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
 Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Khatchatrian, S. Mouradian, A. L’Homme et son environnement. Erevan, 2009.
2. Grégoire, M., Thiévenaz, Od. Grammaire progressive du français (Niveau avancé).
3. Djoulhakian, M., Meliksétian, R., Mouradian, A. Manuel de français. Erevan, 2011.

0305/B93	Արտասահմանյան գրականություն - 1	2 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
II կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անտիկ գրականության ժառանգությունը՝ հիմնվելով աղբյուրների և տեսական նյութի վրա:		
<i>Կրթական վերջնաարդյունքները</i>		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		

Գիտելիք և իմացություն

- կիմանա անտիկ գրականության առանցքային գրական նյութը:

Ունակ կլինի

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- ընկալելու անտիկ գրականության զարգացումներն ու հասկացությունները:

✓ (ընդհանրական կարողություններ)

- հասկանալու անտիկ գրականության ավանդական տեսական մտեցումները:

Համառոտ բովանդակություն.

Թեմա 1՝ Անտիկ գրականության հասկացությունը, պարբերացումը, «հունական հրաշքի» քննադատությունը: *Թեմա 2՝* Հումբերոսի «Իլիականը» և «Ոդիսականը». աստվածներ և մարդիկ, դիցաբանականը և բանաստեղծականը: Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» բարոյախրատական պոեմը: *Թեմա 3՝* Հունական քնարերգության ծագումն ու զարգացումը, թեմատիկան, բանաստեղծները: *Թեմա 4՝* Հունական թատրոն և դրամա, կատակերգություն և ողբերգություն. (Էսքիլես, Մոփոկլես, Եվրիպիդես, Արիստոփանես): *Թեմա 5՝* Հելլենիստական գրականության հասկացությունը, հռոմեական գրականության ծագումը, շրջանները: *Թեմա 6՝* Հռոմեական կատակերգակներ, հռոմեական «ոսկեդար», Վերգիլիոսի «Էնեականը» և դրա կապը հունական էպոսի հետ: Անտիկ աշխարհի կործանման պատճառները և քրիստոնեական գրականության սկզբնավորումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկը

1. Ի. Մ. Տրոնսկի, Մասն առաջին, Հունական գրականության պատմություն,

2. Ի. Տրոնսկի, Մասն երկրորդ, Հռոմեական գրականության պատմություն,
3. Лосев А.Ф., Античная лит-ра,
4. Гаспаров М., Занимательная Греция.

0305/B94	Արտասահմանյան գրականություն - 2	3 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
III կիսամյակ	Եզրափակիչ գնահատման դասընթաց	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ընդհանուր գիտելիքներ հաղորդել համաշխարհային գրականության պատմության, գրական կարևոր դարաշրջանների և ուղղությունների, գրական խոշորագույն երևույթների և գրական զարգացման ընդհանուր ընթացքի վերաբերյալ:</p>		
<p>Կրթական վերջնաարդյունքները Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • կիմանա համաշխարհային գրականության պարբերացման, գրական կարևոր ուղղությունների և ոճերի, գրականության ընթացքի և ներքին զարգացումների օրինաչափությունների մասին: <p><i>Ունակ կլինի</i></p> <ul style="list-style-type: none"> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) • իմանալու գրական խոշոր երևույթները, համաշխարհային գրականության կարևորագույն երկերի բովանդակությունն ու գեղարվեստական արժանիքները: ✓ (ընդհանրական կարողություններ) • կողմնորոշվելու համաշխարհային գրականության վիթխարի ժառանգության ընդհանուր համապատկերի մեջ: 		
<p>Համառոտ բովանդակություն. <i>Թեմա 1՝</i> Վերածնության առաջացումը, նրա առանձնահատկությունները: Վերածննդի գրականությունը Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում: Դանտե Ալիգիերիի «Աստվածային կատակերգություն» պոեմը, Պետրարկայի պոեզիան, Ռաբլեի «Գարգանսյուրա և Պանտագրյուել» և Սեր-վանտեսի «Դոն Կիխոտ» վեպերը: <i>Թեմա 2՝</i> Կլասիցիզմի գեղագիտությունը և գրականությունը: Կոռնել, Ռասին, Մոլիեր: <i>Թեմա 3՝</i> Լուսավորչական գրականության առաջա-</p>		

ցումը 18-րդ դարում: *Թեմա 4*՝ 18-րդ դարի ֆրանսիական փիլիսոփայական վեպը: Վոլտերի «Կանդիդը»: *Թեմա 5*՝ Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպը, Շիլլերի «Դոն Կարլոս» դրաման: *Թեմա 6*՝ Ռոմանտիզմը և նրա գեղարվեստական առանձնահատկությունները: Ռոմանտիզմը Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում և ԱՄՆ-ում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները
Ընթացիկ քննություններ
 Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:
Եզրափակիչ քննություն
 Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
 Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր: Միավորների քայքայ 0,5 է:

- Հիմնական գրականության ցանկը**
1. М.П.Алексеев, В.М.Жирмунский и др. История зарубежной литературы Средних веков и Возрождения. Любое издание.
 2. Մամիկոնյան Հ., Արտասահմանյան գրականության պատմություն
 3. Արտամոնով Դ., 17-18-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն
 4. 19-րդ դարի արտասահմանյան գրականության պատմություն, իմբ. Ս. Տուրանի:

0304/В095	Արտասահմանյան գրականություն -3	3 կրեդիտ
2 ժամ	32/0/0	
IV կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիք հաղորդել 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմության, զարգացման յուրահատկությունների, ոճական, գրական բազմազանության և հարստության վերաբերյալ:		
Կրթական վերջնաարդյունքները		
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կունենա.		

Գիտելիք և իմացություն

- կիմանա 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պարբերացման, գրական կարևոր ուղղությունների և ոճերի, գրականության զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին:

Ունակ կլինի

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- ծանոթանալու հեղինակների կյանքին ու ստեղծագործությանը, կարևոր գրական երկերի ստեղծագործական պատմությանը:
- վերլուծելու ծրագրային ստեղծագործությունները:

✓ (ընդհանրական կարողություններ)

